1. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղի 7-րդ փողոցի թիվ 36 տան բնակիչ Սարգիս Հարությունյանին պատկանող («Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Կոտայքի մարզային մասնաճյուղ արխիվային քաղվածք N Կ-773, տրված՝ 2024 թվականի հուլիսի 4-ին) Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-033-0100-0006-ից) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց 76:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



31 հուլիսի 2024թ.
ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2024թվականի N 893

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Սոսիկ Վիրաբյանի 2024 թվականի հուլիսի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 8-րդ փողոցի թիվ 13 տան բնակիչ Սոսիկ Վիրաբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16072024-07-0232, գաղտնաբառ YQBEFFZ8QFSE) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 8-րդ փողոց 13:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



31 հուլիսի 2024թ.
ք. Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2024թվականի N 894

**ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Վոլրոյա Վարդանյանի 2024 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 63 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Վոլրոյա Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17072020-07-0008, գաղտնաբառ SWGJ7ZRXXHUE) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 126/1 հասցեում գտնվող հողամասի 0.00454հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 126/2, իսկ 0.00488հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 126/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



31 հուլիսի 2024թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2024թվականի N 895

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 57
 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փոփոխված աշխատանքային նախագիծը և Կամո Ղահրամանյանի 2024 թվականի հուլիսի 31-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 14-ի N 57 շինարարության թույլտվության 4-րդ կետում «(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)» տողում լրացնել « «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ» բառերը, իսկ «(նշել իրավասու մարմնի անվանումը)» տողում՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



31 հուլիսի 2024թ
 ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱՂԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2024թվականի N 896

**ՀՐԱՂԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՖՖՈՒ ՓՈՂՈՅ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ
 ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
 ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՔԻԿ ՏԻԳՐԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
 ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, հաշվի առնելով, Ռուբիկ Տիգրանի Ասատրյանին հատկացված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Ռուբիկ Տիգրանի Ասատրյանի 2024 թվականի հուլիսի 18-ի դիմումը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Ճանաչել Ռուբիկ Տիգրանի Ասատրյանի սեփականության իրավունքը Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասի (ծածկագիր 07-001-0679-0012) փաստացի օգտագործվող 0,09428 հա մակերեսով հողամասը, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Վերականգնել Ռուբիկ Տիգրանի Ասատրյանին մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ՝ սեփականության իրավունքը:
3. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Ռուբիկ Տիգրանի Ասատրյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 օգոստոսի 2024թ.
ք. Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2024թվականի N 897

**ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ Կ

- Տրամադրել թույլտվություններ համաձայն հավելվածի.
- համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի,
- հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման,
- հանրային սննդի իրացման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 օգոստոսի 2024թ.
ք.Հրազդան



Հավելված
օգոստոսի 02-ի
N 897 որոշման



ՅՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴԻՐԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգ անուն/ կամ կազմակերպչի անվանումը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ	Տեղական տուրքի տեսակը, սահմանված վճարը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված վճարը (դրամ)
1	Ա/Յ Ալվինա Պետրոսյան Սերյոժայի	Ք.Հրազդան Շահումյան 149	Ք.Հրազդան Շահումյան 149	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
2	Ա/Յ Ալվինա Պետրոսյան Սերյոժայի	Ք.Հրազդան Շահումյան 149	Ք.Հրազդան Շահումյան 149	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
3	Ա/Յ Սևակ Հովհաննիսյան Հրաչյայի	Ք.Հրազդան Կոճոճ 43	Ք.Հրազդան Կոճոճ 43	21 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
4	Ա/Յ Սևակ Հովհաննիսյան Հրաչյայի	Ք.Հրազդան Կոճոճ 43	Ք.Հրազդան Կոճոճ 43	21 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
5	Ա/Յ Քնքուշ Բարսեղյան	Ք.Հրազդան Չարենցի 26	Ք.Հրազդան Սպանդարյան շենք 1 թիվ 2	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	7000 դրամ (եռամսյակի համար) ոգելից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, 14000
6	Ա/Յ Քնքուշ Բարսեղյան	Ք.Հրազդան Չարենցի 26	Ք.Հրազդան Սպանդարյան շենք 1 թիվ 2	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար) ոգելից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, 14000
7	Ա/Յ Կարինե Ստեփանյան	Ք.Հրազդան Սիկորշոջան 228/1	Ք.Հրազդան Սիկորշոջան 229 հարող տարածք	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	7000 դրամ (եռամսյակի համար) ոգելից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000

18	«Պրես Ստենդ» ՍՊԸ	Ք. Երևան Աղշակունյաց 2	Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000 2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
19	«Պրես Ստենդ» ՍՊԸ	Ք. Երևան Աղշակունյաց 2	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 2. Անդրանիկի 14/2	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	7000 դրամ (եռամսյակի համար) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
20	«Պրես Ստենդ» ՍՊԸ	Ք. Երևան Աղշակունյաց 2	Ք. Հրազդան, Բարդսյան թ-ս	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	7000 դրամ (եռամսյակի համար) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
21	Ա/Ձ Կարեն Հայրապետյան Սամվելի	Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ	Ք. Հրազդան Երևան-Սևան 43 կմ	25 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	7000 դրամ (եռամսյակի համար) ոգելից խմիչքների իրացում, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
22	Ա/Ձ Կարեն Հայրապետյան Սամվելի	Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ	Ք. Հրազդան Երևան-Սևան 43 կմ	25 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	5000 դրամ (եռամսյակի համար) հանրային սննդի իրացում, 5000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 5000
23	Ա/Ձ Կարո Մկրտչյան Սամվելի	Հրազդան, Ու. Միքայելյան 4/27	Ք. Հրազդան, Շահումյան 62/1	23 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	5000 դրամ (եռամսյակի համար) հանրային սննդի իրացում, 5000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 5000
24	Ա/Ձ Համեստ Ավետիսյան Ռուբիկի	Հրազդան համայնք, գյուղ Քաղսի	Հրազդան համայնք, գյուղ Քաղսի 1 փողոց, թիվ 9	37 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	11000 դրամ (եռամսյակի համար) ոգելից խմիչքների իրացում, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
25	Ա/Ձ Համեստ Ավետիսյան Ռուբիկի	Հրազդան համայնք, գյուղ Քաղսի	Հրազդան համայնք, գյուղ Քաղսի 1 փողոց, թիվ 9	37 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	10000 դրամ (եռամսյակի համար) հանրային սննդի իրացում, 10000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 10000
26	Ա/Ձ Լուսինե Մինասյան Սամվելի	Հրազդան Միկրոշրջան թ-ս 88/42	Ք. Հրազդան, Պուրակային 36	198 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	25000 դրամ (եռամսյակի համար) ոգելից խմիչքների իրացում, 25000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 25000
27	Ա/Ձ Լուսինե Մինասյան Սամվելի	Հրազդան Միկրոշրջան թ-ս 88/42	Ք. Հրազդան, Պուրակային 36	198 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	25000 դրամ (եռամսյակի համար) հանրային սննդի իրացում, 25000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 25000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2024 թվականի N 898

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՇՏՄԻ
ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Լևոն Խուրշուդյանի 2023 թվականի մայիսի 16-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 82 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2024 թվականի հուլիսի 26-ի N 2952 գրավոր առաջարկությունը և Լևոն Խուրշուդյանի կողմից տրված 2024 թվականի հուլիսի 30-ի թիվ 5822 գրավոր համաձայնագիրը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 1-ին փողոց 3-րդ նրբանցք 9 հասցեում գտնվող՝ 335.9քմ արտաքին մակերեսով պահեստը ճանաչել օրինական:

2. Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 1-ին փողոց 3-րդ նրբանցք 9 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 335.9քմ մակերեսով պահեստը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16072024-07-0225, գաղտնաբառ՝ ID2YSBESWJ1H) գինը սահմանել 956 000 (ինը հարյուր հիսունվեց հազար) դրամ և նույն հասցեում գտնվող պահեստի համար առանձնացված 335.9քմ մակերեսով հողամասը՝ 631 000 (վեց հարյուր երեսունմեկ հազար) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 10 փողոցի 2 նրբանցքի թիվ 6 տան բնակիչ Լևոն Խուրշուդյանին (այսուհետ գնորդ):

3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով պահեստի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 օգոստոսի 2024թ.
ք.Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2024թվականի N 899

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Վարուժան Սարգսյանի 2024 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան 1-ին նրբանցք թիվ 15 տան բնակիչ Վարուժան Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1936863, տրված՝ 2005 թվականի հունվարի 25-ին) Հրազդան քաղաքի Հարավային 644-009 հասցեում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Նար-Դոսի փողոց 9/1:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 օգոստոսի 2024թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2024թվականի N 900

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Երևան քաղաքի Կենտրոն թաղամասի Արուսյան փողոցի 36 շենքի 43 բնակարանի բնակիչ Արեգ Վալերիի Ազոյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում անշարժ գույքի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված ՀՀ-ում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից (VXSOF Ծրագիր) ստացված տեղեկանքների հիման վրա Արեգ Վալերիի Ազոյանը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 2 երկաթգծի կայարանամերձ տարածքում գտնվող հողամասի և գույքի համար հողի

հարկի և գույքահարկի գծով 372905 (երեք հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 283687 (երկու հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ 2009-2020թթ. ապառքի գումար և 89218 (ութսունինը հազար երկու հարյուր տասնութ) ՀՀ դրամ 2009-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 2 երկաթգծի կայարանամերձ տարածքում գտնվող անշարժ գույքի հարկի գծով 853714 (ութ հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր տասնչորս) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 756340 (յոթ հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ 2021-2024 թվականների ապառքի գումար և 97374 (իննսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ 2021-2023 թվականների ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հուլիսի 31-ին ժամը 14:15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի 2024 թվականի հունիսի 28-ի N 23/109470-24 գրություն) Արեգ Վալերիի Ազոյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար Օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արեգ Վալերիի Ազոյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 1226619 (մեկ միլիոն երկու հարյուր քսանվեց հազար վեց հարյուր տասնինը) ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում՝ հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



05 օգոստոսի 2024թ.
ք.Հրազդան

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2024թվականի N 901

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ՉԿՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի Տերյան փողոցի 26 տան բնակիչ Գայանե Պողոսի Չանգույանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում անշարժ գույքի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված ՀՀ-ում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից (VXSOFT ծրագիր) ստացված տեղեկանքների հիման վրա Գայանե Պողոսի Չանգույանը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկ պողոտայի 103/2 հասցեում գտնվող հողամասի և գույքի համար

հողի հարկի և գույքահարկի գծով 123979 (հարյուր քսաներեք հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 85714 (ութսունհինգ հազար յոթ հարյուր տասնչորս) ՀՀ դրամ 2009-2020թթ. ապառքի գումար և 38265 (երեսունութ հազար երկու հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ 2009-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկ պողոտայի 103/2 հասցեում գտնվող անշարժ գույքի հարկի գծով 57620 (հիսունյոթ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 50993 (հիսուն հազար ինը հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ 2021-2024 թվականների ապառքի գումար և 6627 (վեց հազար վեց հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ 2021-2023 թվականների ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հուլիսի 31-ին ժամը 14:30-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ Փարաքար համայնքի 2024 թվականի հունիսի 28-ի N 1919 գրություն) Գայանե Պողոսի Զանգուլյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար Օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն,

օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ Կ

1. Գայանե Պողոսի Զանգույանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 181599 (հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր իննսունինը) ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում՝ հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 օգոստոսի 2024թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2024թվականի N 902

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիսակյան փողոցի 18Բ շենքի 5 բնակարանի բնակիչ Խաչիկ Ռուբենի Բաղդասարյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում անշարժ գույքի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից (VXSOF Ծրագիր) ստացված տեղեկանքների հիման վրա Խաչիկ Ռուբենի Բաղդասարյանը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող անշարժ գույքի հարկի գծով 174962 (հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 160042 (հարյուր

վաթսուն հազար քառասուներկու) ՀՀ դրամ 2021-2024 թվականների ապառքի գումար և 14920 (տասնչորս հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ 2021-2023 թվականների ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հուլիսի 31-ին ժամը 15:45-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի 2024 թվականի հուլիսի 3-ի N 28/111888-24 գրություն) Խաչիկ Ռուբենի Բաղդասարյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար Օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-

227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Խաչիկ Ռուբենի Բաղդասարյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 174962 (հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում՝ հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՎԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 օգոստոսի 2024թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2024թվականի N 903

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի 1-ին փողոցի 15 տան բնակիչ Կրիկոր Կիրակոս Թոմասը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդանի համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում անշարժ գույքի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված ՀՀ-ում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից (VXSOF Ծրագիր) ստացված տեղեկանքների հիման վրա Կրիկոր Կիրակոս Թոմասը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Կոտայքի մարզ Հրազդանի համայնքի Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող հողամասի համար հողի հարկի գծով 190820 (հարյուր իննսուն հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 127107 (հարյուր քսանյոթ

